ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2023 թվականի N 359-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) վերնագիրը «իրացման» բառից հետո լրացնել «, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման» բառերով.

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-20-րդ ենթակետերով՝

«17) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 18 հավելվածի.

19) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի.

20) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 20 հավելվածի։».

3) լրացնել NN 17-20 հավելվածներով՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ